

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի մասնագետի (ծածկագիր՝ 22-33.14-Մ6-1) թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ **ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի մասնագետի (ծածկագիր՝ 22-33.14-Մ6-1)** և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա 2021 թվականի մարտի 18-ին, ժամը՝ 11:00-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N 3):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

- 1) անձնագիր (ԳԾ համարանիշ).
- 2) դիպլոմ (առկայության դեպքում).
- 3) աշխատանքային գործունեցությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).
- 4) արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Հարցազրույցը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային տարբերակը **կցվում է:**

Աշխատավայրի հասցեն՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N 3:

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է 2021 թվականի մարտի 15-ը:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 010-511-318, 010-511-355 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն nunekirakosyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և
թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության
բաժնի մասնագետ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝
Նախարարություն) ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և
թույլտվությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավտոմոբիլային տրանսպորտի
քաղաքականության բաժնի (այսուհետ՝ Բաժին) մասնագետ (այսուհետ՝ Մասնագետ) **(ծածկագիրը՝
22-33.14-Մ6-1)**

1.2. Ենթակա և հաշվետու է

Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոններ կամ պաշտոնների անվանումները

Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը
կամ Բաժնի մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3

2. Պաշտոնի բնութագիր

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները
Գործառույթները՝**

- Մասնակցում է ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական քաղաքականության բնագավառում միջպետական համագործակցության շրջանակներում կազմակերպվող (հանդիպումներ, տեսակոնֆերանսներ, աշխատանքային խմբերի հանդիպում, միջկառավարական հանձնաժողովների նիստեր) միջոցառումների փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման աշխատանքներին.
- Մասնակցում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա վիճակագրական ռեգիստրի վարման աշխատանքներին.
- Մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի մասին տվյալների գրանցամատյանի վարման աշխատանքներին.
- Մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆում) օգտագործվող քարտերի տրամադրման աշխատանքներին:

Իրավունքները

- Պահանջել ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալներ.
- Պահանջել տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի մասին տվյալներ.
- Ստանալ համապատասխան փաստաթղթեր ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների գործունեության բարելավմանն ուղղված

առաջարկությունները մշակելու համար.

- ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու գործընթացի կանոնակարգման փաստաթղթերի ստացում և լրացուցիչ կայքերի հավաքագրում.

Պարտականությունները

- տրամադրել համապատասխան փաստաթղթեր ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական քաղաքականության բնագավառում միջպետական համագործակցության շրջանակներում կազմակերպվող միջոցառումների փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման համար.
- ուսումնասիրելու գրանցամատյան մուտքագրվող տեղեկատվությունը.
- նախապատրաստել ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության վերաբերող տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
- տրամադրել ավտոմոբիլային տրանսպորտի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառին առնչվող տեղեկատվություն՝ Նախարարության պաշտոնական ինտերնետային էջում տեղադրելու նպատակով.
- իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, հաշվետվությունների, զեկուցագրերի, մեթոդական պարզաբանումների և այլ փաստաթղթերի մշակման համար տրամադրել կյուբեր, փաստաթղթեր:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Հաշվետվությունների մշակում
2. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ծառայությունների մատուցում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: